ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
5 սեպտեմբերի 2023 թվականի N 322 - Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով 2023 թվականի հունվարի 20-ին կողմերի միջև կնքված N 4 պայմանագրի 3.5 կետի «գ» ենթակետը, 5.1 կետի «ը» ենթակետը և Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ն. Գևորգյանի 04.09.2023թ. զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2023 թվականի սեպտեմբերի 11-ից լուծել «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ասատուր Ասատրյանի հետ 2023 թվականի հունվարի 20-ին կնքված N 4 աշխատանքային պայմանագիրը:
2. Արմեն Թադևոսյանին 2023թ. սեպտեմբերի 11-ից նշանակել «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. Ղուկասյան**

2023 թ. սեպտեմբերի 5
ք. Կապան